ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ

989. ԵՈՒՆԱՎ ԵԿԵՂԵՑԻ. Մուտքից վերև.

Կառուցավ ՍԲ եկեղեցին ծախքով և աշխատությամբ Գյուլագարակ գեղջ 1814 ամի:

ՀՊԿՍ

Ծանոթ. Կրաշաղախ ամրահյուս պատերով եկեղեցին կործանվել է 1988-ի երկրաշարժից: Զարմանալիորեն համեմատաբար քիչ է տուժել հարավից կցարկված չորս սյուներով կրկնահարկ զանգակատունը:

ԳԱՐԳԱՌ

990. ԽԱՉՔԱՐ. գյուղի Ս.Հովհաննես եկեղեցու բակի գերեզմանոցում, մակերեսին՝ 4, քիվի աջ լանջին՝ 1 տող.

ՍԲ
Ճ|Ա|ՂԿ|ԵԱ|Լ Խ|Ա|ՉՍ
ՕԳ|ՆԵԱ| Մ|Ե|Զ:
1854
ԻԿՄԱԿՏ Է ԱՋՏ|Ե|Ղ:

Ծանոթ. ԺԹ դարում լրիվ վերակառուցված գմբեթակիր եկեղեցին շրջապատված է հին գերեզմանոցով, ուր թաղումներ են արվել մինչև վերջին տարիները: Սույն խաչքարը հնաոճ է, լայն բացված բուսական թևերով, համաչափություններով, կողային կիսասյուներով, որոնք հիշեցնում են հատկապես Լոռի բերդի խաչքարերը: Խաչակոթունի տակ, բլրի (Գողգոթա) ներքո Ադամի գլխաքանդակն է:

Այստեղ կան նույն ոճական համամասնությամբ այլ խաչքարեր ևս ԺԵ-ԺՂ դդ.:

ՎԱՐԴԱԲԼՈՒՐ

Հին բնակավայր է՝ հարուստ պատմական կարևոր հուշարձաններով, որոնցից գլխավորներն են.

Ա. ***Զգրաշեն եկեղեցի.*** գտնվում է գյուղից 1 կմ հյուսիս. Տ-ձև հատակագծով, IV-V դդ. բազիլիկ եկեղեցի է: Ունի երեք մուտք, բեմին արտաքուստ կցված են պայտաձև կամարներ, երկու խորաններ, իսկ պատուհանի պսակները զարդարված են խաղողի ոստերով և տերևներով: Արտաքին պատերին պահպանվել են դուրս ցցված պահունակներ, որոնցից հարավային պատի վրա եղածները կենդանիների գլուխների տեսք ունեն: Այդ հենակները վկայում են երբեմնի արտաքին սրահի գոյության մասին: Թաղն ամբողջովին փլված է. արձանագրություն չունի:

Բ. ***Եկեղեցի և գերեզմանատուն.*** վայրը կոչվում է «Տորմակաղուռ», որպիսի անվամբ հայտնի է նաև եկեղեցին: Գտնվում է Զգրաշենի վանքից արևելք, մոտ 3 կմ հեռու՝

Գյուլագարակից Դենդրարիում տանող ճանապարհին: Հատակագծով նման է Ստեփանավանի Զգրաշենի և Կուրթանի միանավ սրահներին և նրանց հետ կազմում է շրջանում տարածված ճարտարապետական հորինվածքների պատկերը, որը, թերևս, կազմավորվող դպրոցի արգասիք է:

Այնտեղ կան մեծ թվով պատվանդաններ, որոնց վրայի խաչքարերը անհետացել են:

Գ. *Ս. Սարգիս ուխտատեղի.* գտնվում է Կուրթան և Վարդաբլուր գյուղերի արանքում: Ճանապարհի եզրին կա ևս մի հին եկեղեցի T-ձև հորինվածքով: Կրում է Ս. Սարգիս անունը: Տանիքն ավերված է: Արձանագրություն չունի: Նույն ճանապարհից ծախ, բարձր լեռան գագաթին Կյուրիկյանների ամրոցն է՝ տարատեսակ շենքերով հանդերձ: Հուշարձանախումբը բաղկացած է մի փոքր եկեղեցուց և գավթից, իսկ քիչ դեպի արևմուտք՝ մի մեծ շենք է, առանց պատուհանների, որը համարվել է սեղանատուն: Սակայն, ինչպես պարզվում է, այն սարավույթ է: Հուշարձանները երեք կողմից շրջափակված են պատնեշանման բարձրություններով, իսկ հարավային մատչելի մասը ամրացված է հաստահեղույս պարսպով:

Դ. *Գերեզմանատուն.* տարածված է գյուղամիջի եկեղեցու շուրջը, եղել է ընդարձակ, բայց այժմ խիստ ավերված է, այստեղի հին խաչքարը 1198 թվականից է:

991. ԹԱՂԱՇԱՇԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ. ամրոցում, հարավային պատի արևելյան անկյունում, արտաքուստ, բարձրում, 8 տող.



Ի :Ն:Ղ:Թ: (1050) ԹՎԱԿԱՆՈՒԹԵԱՆՍ
ՀԱՅՈՑ ԵՍ՝ ԿՈՐԻԿԷ ԹԱԳԱՎՈՐ
Ս, ՇԻՆԵՑԻ ՁԱՍՐՈՆՍ ՎԱՆՅՍ-
Ն ՄԵՂԱՅ ԹՈՂՈՒԹԵԱՅՆ ԵՎ Ա-
ՐԵՎՇԱՏՈՒԹԵԱՅՆ ԻՄՈՅ՝
ԸՆԴ ՁԵՌԱՄԲ ԱՇՈՏ Մ-
ԱՐԾԱՊԱՆԻՆ: ԱՇ ՎԱԵԼԵԼ
Է:

Հրատ. Բժշկյանց. 82. ԿՏ. 23. «Ազգ. հանդ.», VII-VIII, 354. Ոսկյան. Գվ. 44:

Ծանոթ. Հրատարակիչների մոտ աղավաղ ու անհասկանալի է: Երկմտությունները լիովին չեն փարատվում և այժմ: Երրորդ տողի *ՁԱՍՐՈՆՍ* պետք է ընկալել *ասրոյթ, սարաւոյթ* իմաստով, որը տվյալ դեպքում բացահայտում է թագավորի կառուցած շենքի ինչ լինելը, ֆունկցիան, այն է՝ բածրադիրք ապարանք, հանգրվան իմաստով, ինչն այս դեպքում ընկալելի է դառնում, այսինքն բարձր դիրքում գտնվող ամրակուռ ամրոցի մեջ հուսալի հանգրվան, անձնակազմի և արքայական տան այցելուների իջևանատուն, որպիսին պետք է որ ծառայած լինի հատկապես շենքի երկրորդ հարկը:

Դատելով ժամանակից (1050 թ.)՝ խոսքը վերաբերում է Դավիթ Անհողինի որդի Կյուրիկե թագավորին (1048-1089 թթ.), որն իր գահանիստ մայրաքաղաքը հաստատեց Լոռի բերդում: Տարիների մեծ հեռավորության պատճառով վստահելի չէ Աշոտ մարծպանի՝ 998 թ. Վահրամ Պահլավունու հետ Ծմբո գյուղի ճակատամարտում հանդես եկող զորականի նույնացումը:

Հրատարակիչներն աղավաղել-իմաստազրկել են այս շատ կարևոր և եզակի վավե-

ռագիրը, երրորդ-հինգերորդ տողերի *շինեցի զասրոնս վասն մեղաց թողութեան եվ արեվշատութեան իմոյ* կարդացել են *շինեցա զԱխտոնավանսն մեղաթողութեն եւ վասն արեվշատութեն իմոյ* և *զԱխտոնաշենը* (փոխանակ *զասրոնս*) դիտել տեղանուն. Նույն բերդի շուրջ սփռված բնակավայրի անունը, որը բոլորովին չի համընկնում որմի վրա փորագրվածին, էլ չեմ ասում, որ բերդի շուրջը բնակավայրի հետքեր չկան:

Ջալալյանցը տվել է արձանագրության մի մասի հակիրճ բովանդակությունը, իսկ շենքը, առանց որևէ բացատրության, կոչել է *հիւրատուն*, որը շինել է *ի թուին Հայոց ՇԼ ի կիւրիկէ թագաւորէ Հայոց* (Ջալալյանց, Ա, 123): Իսկ Լալայանը հեռուն գնալով՝ նկատել է. «Ավանդաբար ասում է, թե սա շտեմարան է եղել, թեև կան կարծողներ, որ եկեղեցի լինի» (էջ 353): Նա բաց է թողել որոշ մասեր, իսկ մեզ հետաքրքրող հատվածը կարդացել է. *սահմցի զհաստոյթա վանուցն մեղաց թողութեան*.

Լուսանկարի և գրչագրի որոշ հատվածների ոչ հստակ լինելու պատճառով վերծանությունը մի շարք տեղերում, մեր կարծիքով, թեական է (խմբ.):

992. ԽԱՉՔԱՐ. Մեծ և գեղաքանդակ, գյուղամիջի եկեղեցու հարավային պատի տակ, ճակատին, 3 տող.

Ի ՈՒԽԷ ԹԵՍՍԻՄԷՈՆ ՀԱՆԴԵՐ
ԵՐԻՍ ՈՐԴԷԱՒՔ ԿԱ|Ն|ԳՆԵՑԻ ԶՆՇԱՆՍ
ՈՐՔ ԱԳԷՔ ՅԱՂԱՒԹԱ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ:

993. ԽԱՉՔԱՐ. Նույն եկեղեցու շրջապատի գերեզմանատան մեջ, քիվին և թևերի շուրջ, 3 տող.

ՏՐ ՅՍ ԱՒՐ|Հ|ՆԵԱ| ԶՈՎԱՍԱՓ
ՔԱՀԱ|ՆԱՅ|:
Ի ԹՎ|ԻՆ| :ՈՁԳ: (1234):

994. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ, լավ մշակված, հովվապետական գավազանով ու աջով, 8 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ Մ
ԱՐՄԻՆ ԲԱԶՄԱ
ՇԽԱՏ, ԱՌԱՏԱ-
ՉԵՌՆ ՅՈՎՀԱՆ

ՆԻՍ ԲԱՀԱՆԱՅ
ՁՈՒՐԱՅԵԱՆՑ: Վ-
ԱԽՃԱՆԵԱԼ Ի
1884 ԱՄԻ, 72 ԱՄԱՑ:

Ծանոթ. Այստեղ՝ եկեղեցու բակում կան նաև մի քանի հոգևորականների սալատապաններ, որոնց հիշատակագրերը հարկ չհամարվեց արտագրել:

ԿՈՒՐԹԱՆ

Գտնվում է Պըլըղ (Պալըղ) և Գառգառա ջուր գետակների միակցումից գոյացած լեզվակաձև հարթության վրա: Շրջանի հնագույն բնակավայրերից է: Գյուղամիջում կանգնած է IV դարի բազիլիկ եկեղեցին: Նմանատիպ մի կիսավեր եկեղեցի էլ կա Վարդաբլուր տանող ճանապարհին, իսկ Հնեվանի ձորում կան նաև բազմաթիվ բնական քարայրներ, որոնցից մի քանիսը վեր են ածվել մատուռ-ուխտատեղիների:

Արձանագրություններ ունեցող հուշարձանները հետևյալներն են.

Ա. *Գերեզմանատուն.* գտնվում է գյուղի հյուսիսային եզրին. կան մի մատուռի ավերակ ու բազմաթիվ կանգուն և ընկած խաչքարեր. վերջիններից ամենահինը 1086 թվից է:

Բ. *Խաչքարեր՝* 3 հատ, գտնվում են Հնեվանի ձորում, «միջի գոմեր» կոչված վայրում, Պըլըղ գետակի աջ ափին. դրանց մոտ կա մի ավերակ մատուռ, գետակի վրա՝ կամուրջի մնացորդներ: Խաչքարերից երկուսի վրա կան ընդարձակ արձանագրություններ. հինը՝ 1229 թվի:

Գ. *Մտի մատուռ.* գտնվում է Հնեվանի ձորի քարափի մեջ. բնական այր է եղել, որի առաջ պատ շարելով՝ դարձրել են ուխտատեղի: Ներսում ընկած է երեսպատման մի քար՝ շինարարական արձանագրությամբ: Հավանաբար սրա մասին է Լալայանը գրել, թե աղոթատեղի է «Դռան մոտ կայ հայերեն եղծուած արձանագրութիւն» (էջ 338):

995. ԽԱՉՔԱՐ. գյուղի գերեզմանատանը, կողքին պատվանդանն է, եղել է ճարտարապետորեն որմնաշարված և բարձր: Մնացել են արևմտյան կողմի երեսապատման մի քանի քարերը:

Խաչքարի չորս շրջանակներին.